Սերժ Սարգսյան. Դատարաններում գործերը չպետք է որակի հաշվին արագ քննվեն եւ հապճեպ որոշումներ կայացվեն

29.09.2012 11:32

Սկզբնաղբյուր՝ http://news.am/arm/news/122836.html

Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր՝ սեպտեմբերի 28-ին ՀՀ դատահիրավական համակարգի ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրել է խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության արդյունավետության բարձրացման, ինչպես նաեւ դատարանների ծանրաբեռնվածության եւ ողջամիտ ժամկետում գործերի քննության խնդիրները:

Նշված խնդիրների վերաբերյալ զեկույցներ են ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանը, ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը, ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանը: Հանրապետության նախագահը հանձնարարել է զեկույցներում ներկայացված առաջարկները լրացուցիչ քննարկման առարկա դարձնել եւ նախապատրաստել անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների փաթեթ:

Խորհրդակցության ընթացքում ներկայացվել են առաջին ատյանի դատարաններում գործերի՝ ողջամիտ ժամկետում քննությանը խոչընդոտող մի շարք պատճառներ, ինչպիսիք են մասնավորապես դատարանների ոչ համաչափ ծանրաբեռնվածությունը՝ կապված տարածքային ընդդատության հետ, ինչպես նաեւ նույն դատարանի դատավորների միջեւ գործերի ոչ համաչափ բաշխվածությունը:

Նախագահ Սերժ Սարգսյանն առանձնակի ուշադրություն է դարձրել նախորդ խորհրդակցությունների ընթացքում բարձրացված խնդիրների լուծման կապակցությամբ տրված հանձնարարականների կատարմանը եւ դատարանների բնականոն գործունեության ապահովման առումով դրանց կարեւորությանը:

«Մեկ անգամ չէ, որ առիթ եմ ունեցել ասելու, որ դատարանների բնականոն գործունեությանը վերաբերող ցանկացած խնդիր պահանջում է լրջագույն վերաբերմունք: Նման հարցերին վերապահումներով մոտեցումները պարզապես անթույլատրելի են եւ աններելի: Արդարադատության համակարգի արդյունավետությունը չի կարող եւ չպետք է կախված լինի կոնկրետ անձանցից կամ այդ անձանց թերի ու անբարեխիղճ աշխատանքից:

Մենք ունենք հստակ ուղենիշ՝ իրավունքի գերակայության եւ արդարության արմատավորում մեր հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Վստահ եմ, որ այս ճանապարհին եղած յուրաքանչյուր խոչընդոտ հաղթահարելու ենք, եւ որեւէ անտարբերություն կամ ձախողման արդարացում չենք ընդունելու:

Ժամանակն է վերջնականապես հասկանալու, որ այս գործընթացը հետադարձ չունի, եւ դրան պետք է միայն համընթաց գնալ: Ավելի պարզ ասեմ. ովքեր համընթաց չգնացին, նրանք ապագա չունեն:

Դատարանների ծանրաբեռնվածության եւ գործերի արագ քննության հարցին մենք անդրադառնում ենք երկրորդ անգամ: Այս հարցին անդրադարձել ենք մեկ տարի առաջ, եւ այդ ժամանակ բացահայտվել էին այս առումով դատական համակարգում առկա թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ խնդիրներն ու տրվել էին դրանք վերացնելուն ուղղված հստակ հանձնարարականներ»,-ասել է նախագահ Սերժ Սարգսյանը: Հանրապետության ղեկավարն ընդգծել է, որ դատարաններում գործերը չպետք է որակի հաշվին արագ քննվեն եւ հապճեպ որոշումներ կայացվեն, բայց արհեստական ձգձգումներն ուղղակի անթույլատրելի են:

խորհրդակցության արդյունքում արձանագրվել է, որ գործերի ողջամիտ ժամկետում քննությանը խոչընդոտող սուբյեկտիվ բնույթ ունեցող պատճառներն ամբողջությամբ չեն վերացվել, եւ դրանք շարունակում են բացասական ազդեցություն թողնել դատավորների ծանրաբեռնվածության վրա:

Ինչ վերաբերում է օբյեկտիվ խնդիրներին, նախագահը հանձնարարել է կատարել օրենսդրական փոփոխություններ եւ մի շարք դատարաններում դատավորների ծանրաբեռնվածության վիճակագրական տվյալների ամփոփման արդյունքներից ելնելով՝ ավելացնել դատավորների քանակը: Պատասխանատու կառույցների ղեկավարներին հանձնարարվել է առավելագույն սեղմ ժամկետներում նաեւ օրենսդրական բնույթի այլ միջոցներ ձեռնարկել դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })